ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 8 » փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-06/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մավշին» ՍՊԸ-ի 29.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.01.2016թ. ներկայացրած բողոքով «Մավշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանը ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպել է «ՎՔ-ԲԸԱՀ-

ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, 1-ին և 2-րդ չափաբաժիններին մասնակցել է նաև «Մավշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն.

- «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն բավարարում հրավերի պահանջներին,
- բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան,
- հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ պատշաճ է գնահատել «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, իսկ Ընկերության հայտը մերժելով՝ ակնհայտորեն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական նորմերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

«Մավշին» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները, քանի որ գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ չի հիմնավորվել, թե ինչու է «Մավշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել, հրավերով պահանջված ինչ փաստաթղթեր են բացակայել, կամ հայտում առկա, որ փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան, և ընդհանրապես, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ավելին, Ընկերությունը նշել է, որ «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն համապատասխանել հրավերի պահանջներին՝ գնահատող հանձնաժողովը չի նշել, թե կոնկրետ ինչով վերը նշված չափանիշները չեն բավարարել հրավերի պահանջներին, ինչով Ընկերության կողմից խախտել են իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքները, որն էլ իր հերթին ուղղակիորեն հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջների խախտմանը:

Ընկերությունը նշել է նաև, որ չհիմնավորված կերպով մերժվել է «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Մավշին» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ Ընթացակարգի մասնակից «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 08.01.2016թ. ներկայացրած բողոքը նույն փաստական հանգամանքների պայմաններում և նույն իրավական հիմքով բավարարվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 20.01.2016թ. թիվ 01/16 որոշմամբ: Մասնավորապես, Խորհուրդը վերը նշված բողոքով գտել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և նեկայացվել են հարավերի պահանջներին համապատասխան, բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, մասնավորապես, թե «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի բացված ծրարում հրավերով

պահանջվող փաստաթղթերից կոնկրետ որ փաստաթղթերն առկա չեն եղել կամ, որ փաստաթղթերը կազմված են սահմանված որ պահանջներին համապատասխան, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, ավելին հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներին:

Հաշվի առնելով, որ «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերոնշյալ նորմերը, ինչը նույն իրավական հիմքով նույն փաստական հանգամանքներում հաստատվել է նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 01/16 որոշմամբ, և ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, նույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, «Մավշին» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. Դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները հրավերի պահանջներին չբավարարելու, «Մավշին» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

2. Կիրառել ժամանակավոր միջոց. կասեցնել «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

2. <u>Վայքի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Վայքի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.02.2016թ. գրությամբ «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք

համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է հետևյալ փաստաթղթերի հրավերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով: Մասնավորապես՝

Մասնավորապես, «Մավշին» ՍՊԸ-ն (կոնսորցիումով մասնակցել է «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն) իր ներկայացրած հայտում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով ներկայացրել է հայտարարություն հայտը ներկայացնելու և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված շինարարական աշխատանքներ՝ 92557412 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Համաձայն Ընթացակարգի հրավերի պահանջների՝ մասնակիցը պետք է հայտով ներկայացնի իր կատարած աշխատանքների պայմանագրերի պատճենները և դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը: «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է նախկինում կատարված երկու պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 76962673 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում Հավելված N 3.1-ով ներկայացրած հայտարարությանը:

«Տեխնիկական միջոցներ» չափանիշի գծով «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է Զիլ ԿՍ-2571 Ա Ավտոկռունկի վարձակալության պայմանագիր, որի գործողության ժամկետը սահմանված է մինչև 30.12.2014թ.: Պայմանագրին կից պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգող որևէ համաձայնագիր չի ներկայացվել: «Մավշին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքում կցված լրացուցիչ համաձայնագիրը նշված պայմանագրի անբաժանելի մասն է և պետք է ներկայացվեր պայմանագրի հետ միասին:

Համաձայն Կարգի 74-րդ կետի «զ» պարբերության՝ հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա

ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգը կազմակերպելիս՝ հաշվի են առնվել Կարգի 45-րդ և 46-րդ կետերը՝ հաշվի առնելով նույն որոշման 10-րդ գլխի առանձնահատկությունները (մեկ աշխատանքային օր չի տրամադրվում թերությունները շտկելու համար):

Վայքի քաղաքապետարանը հայտնել է նաև, որ «Մավշին» ՍՊԸ-ն ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագիր, որտեղ հստակ նշված չեն գործընկերների կողմից կատարվող ներդրումները, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագրերը) չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Կենտրոնում 03.02.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի վերաբերյալ Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ԳԲԽ-06/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-06/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանը՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի 1-ին (Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման աշխատանքներ) և 2-րդ (Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքներ) չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել

նաև «Մավշին» ՍՊԸ-ն և «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է՝

- «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն բավարարում հրավերի պահանջներին,
- հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,
- բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան,
- հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում,
- հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

4. <u>ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մավշին» ՍՊԸ-ի 29.01.2016թ. ներկայացրած բողոքը, Վայքի քաղաքապետարանի 04.02.2016թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Մավշին» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» և «Տեխնիկական միջոցներ» չափանիշները չեն բավարարում հրավերի պահանջներին, հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, *բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան*, սակայն հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, մասնավորապես, թե «Մավշին» ՍՊԸ-ի բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերից կոնկրետ որ փաստաթղթերն առկա չեն եղել կամ որ փաստաթղթերը կազմված չեն սահմանված որ պահանջներին համապատասխան, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելության պահանջներին:

Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***, իսկ Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար, ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Արդյունքում, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Մավշին» ՍՊԸ-ի 29.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Մավշին» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-06/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան